ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
REPUBLIC OF ARMENIA – CENTRAL ELECTORAL COMMISSION

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅԱՆԸ ՄԻԱՆԱԼՈՒ ՁԵՎԱԹԵՐԹԻԿԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ԿԱՐԳԻ

1. *Ազգային Ժողովին **«Եվրոպական միությանը Հայաստանի Հանրապետության անդամակցելու գործընթացի մեկնարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի** նախաձեռնությանը էլեկտրոնային եղանակով տեղում ստորագրությունների հավաքմանը քաղաքացիները կարող են միանալ **2024 թվականի սեպտեմբերի 16-ից մինչև 2024 թվականի նոյեմբերի 14-ը ներառյալ:***

Համակարգ կարելի է մուտք գործել նույնականացման քարտի միջոցով՝ Ընթերցող սարքի կիրառմամբ, որը նախատեսված է սովորական և դյուրակիր համակարգիչների հետ աշխատելու համար: Սարքը միանում է համակարգչի **USB միջերեսին (ինտերֆեյսին)** և չի պահանջում լրացուցիչ ծրագրային ապահովում: Այն նախատեսված է ՀՀ քաղաքացիների նույնականացման քարտի հետ աշխատելու համար և կիրառվում է առցանց էլեկտրոնային ծառայություններից օգտվելու համար:

Նույնականացումն գործում է միայն Google Chrome և Microsoft EDGE 10 դիտարկիչներով: Համակարգչում պետք է տեղադրված լինի **CryptoCard Monitor ծրագիրը**: Ծրագրի տեղադրման փաթեթը և տեղադրման քայլերի հերթականությունը հասանելի է հետևյալ հղմամբ՝
https://www.ekeng.am/hy/crypto_card_suite_manager

ՔԱՅԼ 1 Քաղաքացին տեղադրում է նույնականացման քարտը Ընթերցող սարքի մեջ: Նույնականացման քարտի միջոցով նույնականացվելու համար մուտքագրում է նույնականացման քարտի PIN կոդը: Նույնականացման քարտի ընթերցումից հետո քաղաքացին ծանուցվում է Համակարգ մուտք գործելու մասին:



ՔԱՅԼ 2 ***Քաղաքացին*** սեղմում է OK կոճակը, որից հետո Համակարգում երևում է այդ ժամանակահատվածում ներկայացված Նախաձեռնությունը:



ՔԱՅԼ 3 Քաղաքացին ընտրում է Նախաձեռնությունը, որին ցանկանում է միանալ և սեղմում է

կոճակը:

Նախաձեռնության էջում Համակարգը ներկայացնում է էլեկտրոնային եղանակով Նախաձեռնությանը միանալու ձևաթերթիկի տեքստը՝ լրացված քաղաքացու տվյալներով՝ ազգանուն, անուն, հանրային ծառայության համարանիշ:



ՔԱՅԼ 4 Նախաձեռնությանը միանալու ձևաթերթիկը էլեկտրոնային եղանակով ստորագրելու համար քաղաքացին պետք է սեղմի [Ստորագրում եմ] կոճակը, ինչը նշանակում է, որ քաղաքացին ստորագրել է Նախաձեռնությանը միանալու ձևաթերթիկը էլեկտրոնային եղանակով, որի մասին ստանում է ծանուցում և ստուգման կոդ, որով կարող է ստուգել էլեկտրոնային եղանակով ստորագրությունների հավաքմանը միացած լինելու հանգամանքը:



Ստուգումն իրականացվում է հետևյալ կերպ՝ քաղաքացին ընտրում է «Ստուգում» բաժինը, մուտքագրում է «գրանցման ստուգման կոդը» և սեղմում է «Ստուգել» կոճակը:



Ստուգման արդյունքում ստացվում է հետևյալ ծանուցումը՝



Եթե քաղաքացին ցանկանում է չեղարկել Նախաձեռնությանը միանալը, ապա սեղմում է Չեղարկում եմ միանալը կոճակը է:

«Չեղարկում եմ միանալը» կոճակը սեղմելուց հետո քաղաքացին դուրս է գալիս ստորագրման էջից:

Ուշադրություն կոճակը, սեղմելուց հետո քաղաքացին չի կարող չեղարկել Նախաձեռնությանը միանալը:

Համակարգում Տպել կոճակի միջոցով քաղաքացին կարող է տպել ընթացիկ պատուհանը:

Համակարգի միջոցով յուրաքանչյուր Նախաձեռնությանը քաղաքացին կարող է միանալ մեկ անգամ:

Նախաձեռնությանը էլեկտրոնային եղանակով մեկից ավելի անգամ միանալու դեպքում քաղաքացին Համակարգի միջոցով ծանուցվում է Նախաձեռնությանը միացած լինելու մասին:



Ուշադրություն Մեկից ավելի Նախաձեռնությունների դեպքում յուրաքանչյուր Նախաձեռնության համար ստեղծվում է առանձին միջավայր:



- Քաղաքացին ընտրում է Նախաձեռնությունը, որին ցանկանում է միանալ և համապատասխան Նախաձեռնությանը միանալու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ժամկետներում կատարում է **սույն ուղեցույցի 1-4 քայլերը**: